

ԿԲՈՅՏԱՀՈՎՈՅԻ ԽՈՐԴԱՅԻ  
ՊԱՅԵՄՆԵՐ ՀԱՅՈՒԹ

Ա. ՇԵԳԱՆԵԼ

ԻՆՉՊԵՍ ՊԻՂԴԵԼ  
ՌՂՐԱԿՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ  
ՀՈՐՐՈՐԴ

ԿՈՒՏՏԱՏԵՍԱՎՅԻՆ և  
ՀՐԵՎԱԴԱՅԻՆ  
ԴԱՏԻ ՇԵՐՋԵՐԻ  
ԽՍԲՎԳԻՐՆԵՐԻ  
ՀԵՐԱԿԱ -  
ԴԱՍԸՆԹԱՎՆԵՐ



ԽՈՐՇՐԴԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ-Ի  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԷՐԵԿԱՆ ԱԳՅԱՆ

070.1

**«ԽՈՐՀԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

Սույն դասախոսությունը վերաբերում է լրագրային լեզվի մաքուրացիանը, հստակության ու պարզությանը։ Հեղինակը նյութն ավելի համականակի և համոզիչ դարձնելու նպատակով, բազմաթիվ որինակներ ե բերել ռուսերեն լեզվով լույս տեսնադ պատի բերքերից։

Հաշվի առնելով հայոց լեզվի յուրահատկությունները՝ բարգմանության ընթացքում մի շարք որինակներ փոխարինվել են մեր պատի բերքերից վերցրած որինակներով։

## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՆԵԼԸ

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԳՈՐԾ Ե

Պատոի թերթի խմբկոլը զյուղթղթակցից թղթակցություն և ստացել։ Հեղինակի հաղորդած փաստերը հետաքրքրական են և վոչ մի կառկած չկա, վոր ձշմարիտ են։ Շատ պատի թերթերի խմբագիրներ կարծում են, թե այդպիսի թղթակցությունը կարելի յէ տպագրել այնպես, ինչպես կա, առանց վօրեւ փոփոխության յենթարկելու, յեթե նույնիսկ զրկած և մի քիչ խառն ի խուռն։

Խմբագիրներ ել կան, վորոնք թղթակցությունն ուղղելու դործը վստահում են խմբագրության հետ կազ չունեցող, նույնակ ակնայտորեն անհուսալի մարդկանց։

— Թղթակցություն ուղղելը, — ասում են նրանք, — տեխնիկական դործ ե։ Մի քիչ «կիսազմղես» և վերջացավ։

Ճի՞շտ և արդյոք այդ։

Իհարկե՝ վո՞չ։ Մեծ սխալ են դործում այն ընկերները, ովքեր լուրջ ուշադրություն չեն դարձնում պատի թերթի լեզվի վրա, ովքեր անուշադիր վերաբերմունք են ցույց տալիս թղթակցություններն ուղղելու դործին։

Ինչպես ե շարադրած թղթակցությունը, բառերն ինչպես ևն դասախորած նրա մեջ և վորքան հաջող բառեր են ընտրված։ ահա, հաճախ սրանից ե կախված ամենազլավորը՝ ընթերցողները կհասկանա՞ն այդ թղթակցությունը, թե՞ վո՞չ։ Դեռ ավելին։

Յեթե անդրագետ լեզվով դրված թղթակցությունը չի ուղղված, յերբեմն ընթերցողն այդ թղթակցությունից այն չի հասկանում, ինչցանկացել են ասել զյուղթղթակիցն ու խմբկոլը։ Այդ ցույց տանք որինակով։

«Նաչալո» կոլտնահետության բրիդադիր ընկ. Կորժեվը (Վորոնեժի մարզի Պողպորենյան շրջան) հանկարծ, հենց ցանքն սկսելու որերին սկսում ե կասկածել իր ուժերին։ Նա սկսում ե մեկը մյուսի հետեւից դիմումներ տալ կորվարչությանը և խնդրել, վոր իրեն աղատեն բրիդադիրի պարտականությունից։ Վարչությանը չի համաձայնում։ Կորժեվը շարունակում ե դիմումներ տալ։ Յեկ ահա, այդ դործով զրադգում ե կոլտնահետության «Զա 7—8 միլիարդով պուզով խլերա» պատի թերթը։

Կըտամբելով բրիդադիրին, վոր ամենայնուն շրջանում տապալում ե կոլտնահետության պլանները, հեղինակն իր թղթակցությունն ավարտում ե այսպես։



11-28550

«Ընկեր կործեվ, ստախանովյան ցանքի նախապատրաստման և կատարման շրջանում չպետք է խուճապի մատնվել»:

Խմբկոյն այս արտահայտությունը չի ուղղում, այդպես ել տըպագրում և պատի թերթում։ Յեվ ահա, թերթի ասելով զուրս և դալխո, վոր խուճապի մատնվել չի կարելի միայն ցանքը նախապատրաստելու և կատարելու ժամանակ, իսկ ուրիշ ժամանակ, վորպես թե, այդ կարելի յե։ Բայց, իհարկե, վո՞չ դյուզթղթակիցը, վո՞չ խմբկոյն այդ չեն ցանկացել ասել։ Յերբեք ել խուճապի չպետք և մատնվել։

Հետեւապես, հարկավոր ե թղթակցությունն այնպես գրել և ուղղել, վոր նրա մեջ յերկիմիմի, յերկիմաստ արտահայտություններ չմնան։ Այնպես պիտի անել, վոր յուրաքանչյուր թղթակցություն քաղաքականապես ճիշտ լինի, իր բովանդակությամբ լինի պարզ ու հասկանալի՝ յուրաքանչյուր ընթերցողին։

Այս թղթակցությունը, վոր անկարողության, անփութության հետեւանքով, կամ չարամտորեն ճիշտ չի ճեակերպած, յերբեմն ողուտի փոխարեն վնաս կարող է հասցնել։

Այս ավելի պարզ լինելու համար մի հասարակ որինակ բերենք։ Ազով-Սևծովյան յերկրամասի Պրոլետարակի շրջանում «Կրասնի Վոստօկ» անունով մի կոլտնտեսություն կա, վորը կաթնապրանքային Փերմա ունի։ Գրուզթղթակիցը կոլտնտեսության «Զա լիսոկի ուրաժայ» պատի թերթի խմբկոյն հանձնեց մի թղթակցություն, վորով հայտնում եր, թե Փերմայում զործերը լավ չեն։

«...Ենքն ամիսներով չի մաքրվում, — գրում ե նա, — հորթերը քայլելիս նրանց մեջքն առաստաղին ե քավում, կեզտու են, չսանրված, նիշար։ Յեղական անասունների և լնդհանրապես անասունների նկատմամբ վոչ մի տեղ այսպիսի ինամք չեք տեսնի»։

Թղթակցության այս մասը քավ ե զրված։ պարզ ու հասկանալի։ Հեղինակի խոսքերի մեջ հոգատարություն ե զգացվում գեղի կորանտեսային բարիքը։ Խմբկոյը ճիշտ և վարդել, վոր այստեղ վոչինչ չի ուղղել։


Բայց ահա, չուզելով այս թղթակցության շարունակությունը՝ խմբկոյը քաղաքական կոստիս/ սխալ ե զործել, ինչպես այդ ինքներդ ել կտեսնեք։ Շարունակության մեջ գրված ե.

«Պետք ե լավ աշխատել, առանց մտածելու, վոր այդ կորանտեսությանն ե և այզպիսի խնամքն ել բավական ե»։

Մենք հավատացած ենք, վոր վոչ թղթակցության հեղինակը, վոչ պատի թերթի խմբկոյը չեն ցանկացել ասել, թե կոլտնտեսության ունեցվածքն կարելի յե և վատ վերաբերվել։ Բայց, արի տես, վոր հենց այզպես ե զուրս յեկել։ Վա՛տ, հակահեղափոխական միտք ե ստացվել։ Յեվ այդ միայն այն պատճառով, վոր խմբկոյը չի ոզնել զյուզթղթակիցին, չի ուղղել թղթակցությունը, չի զրել այնպես, ինչպես ցանկացել ե ասել հեղինակը։ Յեթե խմբկոյն այդ աներ, ապա այդ նախադասությունը կստացվեր այսպես։

«Պետք ե լավ աշխատել, կոլտնտեսության բարիքը ավելի լավ պահպանել, քան քո անձնուկան ունեցվածքն ես պահպանում»։

Այս բոլորից պարզ ե, վոր պատի թերթի թղթակցությունն ուղղելը, նրա բովանդակությունը ճիշտ չարագրելը հասարակ «տեխնիկական» գործ չե, այլ կարելոր, քաղաքական, պատասխանառու աշխատանքը։ Այդ աշխատանքը, ինչպես և պատի թերթի ամբողջ աշխատանքը բոլչեկիյան զգոնություն է պահանջում։ Պատահական, չստուգված մարդկանց չի կարելի հանձնարարել թերթի վորեւ աշխատանքը։



# ՄԻՇՏ ՀԻՇԵԼ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ավելորդաբանություններով ծանրաբեռնված, խճողված թղթակցության իմաստը դժվար է հասկացվում։ Յուրաքանչյուր թղթակցություն թերթում տեղափորելիս՝ խմբադիրը պետք է նկատի ունենալ ընթերցողների շահերը։ Նա նաև և առաջ պետք է հաշվի առնի, թե արդյոք ավյալ թղթակցությունը լիովին հասկանալի կլինի ընթերցողին։ Շատ ոգտակար է վերհիշել, թե Վլադիմիր Իլյիչ Լենինի ինչքան մեծ նշանակություն եր տալիս զրական լեզվի հասկանալիությանը։

Գերմանացի կին կոմունիստ հանդուցյալ Կլարա Ֆեռկինը պատմում էր, թե մի անդամ ինքը հարցրել է Վլադիմիր Իլյիչին՝ ինչո՞ւ յե նա միշտ ել այնքան պարզ և միաժամանակ դեղեցիկ ու համոզիչ ձևով խոսում։ «Գուցե, — հարցրել է Ֆեռկինը, — այդ ոլավոնական կուլտուրայի յուրահատառկ բնորոշ զի՞ծն ե»։

Վլադիմիր Իլյիչը նրան պատասխանել է.

«Այդ յես չգիտեմ։ Գիտեմ միայն, վոր յերր յես հանդես եյի դալիս «վորպես հոետոր», միշտ մտածում եյի բանվորների և դժուղացիների մասին՝ վորպես իմ ունկնդիրների մասին։ Յես ցանկանում եյի, վոր նրանք հասկանան ինձ։ Կոմունիստը, վորտեղ ել խոսելիս լինի, նա պետք է մտածի մասսաների մասին, պետք է խոսի նրանց համար»։

(ԿԱՍՏԱ 8ԵՏԻՒՆ, ՀԻՇՊՈՎԹՅՈՒՆՆԵՐ ԼԵՆԻՆԻ ԺԴՈՒՆ. Մարքսի, ենդեւոր ու Լենինի ինստիտուտի և Կուսհրատի հրատարակություն. 1933

թ., էջ 58)։

Շատ խրատական է խմբադրական այն խոչըր աշխատանքը, վոր կատարվեց «ԽՍՀՄ Քաղաքացիական պատերազմի պատմությունը» առաջին հատորի վրա։ Զնայած նյութերը նախորդ մշակել եյին փորձամատուցում ու դրույներ, բայց և այնպես Գլխավոր խմբադրության կատարած ուղղումից հետո արգեն տարակուսանք լինել չի կարող, վորովհետեւ գրանից մի յերկու տող վերև Խորհրդի մասին ասված է, վոր այդ եսեր-մենշևիկյան Խորհրդություն։


Գլխավոր խմբադրության ուղղումները յերբեմն այն ելին լինում, վոր նա մի բառը փոխարինում էր մի ուրիշով, կամ ավելացնում եր մի նոր բառ։ Սակայն հենց այդ մի բառը ամբողջ հարցը լուսաբանում եր բոլորովին այլ կերպ, հենց այնպես, ինչպես արկալոր և լուսաբանել։

Որինակ՝ ընկ. ի. ՄԵՆԳԵՐ, վոր մասնակցել է այդ զրգի առաջին հատորը կազմելուն, այսպիսի մի դեպք է պատմում։

«Գլխավոր խմելը պատմում է, թե ինչպես եսեր-մենշևիկները — Զիսեֆձեն, Սուխանովը և ուրիշները — 1917 թ. մարտի 2-ի զիշերը զնացին Միլյուկովի ու Ռոձյանկովի մոտ՝ խոսելու, վոր իշխանությունը հանձնվի բուրժուազիային։ Այնուհետեւ գրված է. «Նիստը վերջացավ։ Պետական դումայի ժամանակավոր կոմիտեն սկսեց կառավարության գուցակ կազմել, իսկ խորհրդացին ներկայացուցիչներն զրագիցին դեկտացիայով։ Մարտի 2-ի լուսաբացին նորից հավաքվեցին։ Խորհրդացին դեկտացիային Միլյուկովին գուր չեկավ և նա նստեց, վոր տեղն ու տեղն ուղղի»։

Գլխավոր խմբադրությունն ուղղեց միայն մի բառ։ «Խորհրդացին ներկայացուցիչներ»-ի փոխարեն զրեց «Խորհրդացին կայացուցիչներ»։ Ինչո՞ւ ժամանակակից ընթերցողը «Խորհրդացին պատգամավորություն», «Խորհրդացին ներկայացուցիչներ» բառերի հետ, բնականաբար, կապում է պրոլետարիատի դիկտատուրան, նկատի յե ունենում բոլշևիկյան Խորհրդները, իսկ այդ սովորական հասկացողությունն այսուեղ հանդիպում է տարրորինակ կուղագիպությամբ, բանակցություններ Միլյուկովի հետ, բուրժուազիայի հետ՝ իշխանությունը հանձնելու մասին։ Գլխավոր խմբադրության կատարած ուղղումից հետո արգեն տարակուսանք լինել չի կարող, վորովհետեւ գրանից մի յերկու տող վերև Խորհրդի մասին ասված է, վոր այդ եսեր-մենշևիկյան Խորհրդություն։

(«ԲՈԼՇԵՎԻԿ» ԺՈՒՐՆԱԼ 1935 թ. № 21)։



# ՈՒՂՂԵԼ ԽՆԱՄՔՈՎ, ԱՌԱՅՑ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻ

Այսպիսի մի գեղք է յեղել: Վորոշվլովսկի (Հեռավոր Սրեւլյան յերկրածառ) Յուղկոմբինատի ստախանովական ընկ. Պիմչենկոն «Զա սորոյկու» պատի թերթի խմբադրին հանձնում է մի թղթակցություն: Աչա թե ինչ եր գրում նա.

«Յուղկոմբինատում բնակարանի խիստ պակաս է զգացվում: Զնայած գրան, բնակարանային մասի զեկավարներ ընկ. ընկ. Աղամովն ու Շպորտունը միջոցներ չեն ձեռք առնում կոմբինատի տներից վատարելու նրանց, ովքեր կոմբինատում չեն աշխատում: Աղամովն ու Շպորտունն ինչո՞ւ յեն այդպիսի սիրալիր վերաբերմունք ցույց տալիս գեղպի չփող Պոտապիկինը»:

Թղթակցությունը զրված է պարզ ու հասկանալի: Կարելի յեր պատի թերթում տեղավորել թերեւ անհշան ուղղումներով: Բայց պատի թերթի խմբադրի ընկ. Որպանովն ուրիշ կերպ է մտածում.

— Ճատ և հասարակ լեզվով զրված: Հարկավոր է մի քիչ աշխատացնել...

Յեվ, վորովհետև թղթակցության աշխատացում ասելով նա բոլորին սխալ բան եր հասկանում, դրա համար ել այդ թղթակցությունը շուտով նրա զրչի տակ հետեւյալ պատկերն է ստանում.

«Մեր մոլորակը, ինչպես և մեր կոմբինատը, զերբանակեցված ե: Բայց մենք չափազանց զարմացած ենք, ինչո՞ւ զուք ձեր բանվարների համար բնակարան չեք վորոնում ձեր տներում... Մարդ ժիայն զարմանալ կարող ե այդ, թույլ տակիք ասել, մարսնցիների հեռատեսության վրա և հրաժարվել Մարսի վրա բնակարան վորոնելուց: Իսկ մարսեցիներն իրենց հերթին...» և այլն:

Ծրջանային «կոմունար» թերթից մենք տեղեկացանք, վոր բանվորներին չուզել ե իրենց թղթակցությունների այսպիսի անիմաստ ու կամայական աղավաղումները և նրանք զաղարել են թղթակցություն զրել «Զա սորոյկու» թերթին:

Իշարկե, այդ բանթղթակիցները ձիչտ չեն վարվել. վոչ թե պետք է ձեռք քաշել թերթին աշխատակցելուց, այլ պետք է միշոցների դիմել, վոր թղթակցությունները չաղավաղվեն: Հարկավոր եր ընկեր Որպանովին հասկացնել, վոր վերջ տա իր փուչ ու անբովանդակ ճռճողներին:

Ճիշտ ե, այս ամենը տեղի յե ունեցել վոչ թե կոլտնտեսությունում, այլ զործարանում, բայց զրանից ինդրի եյությունը չի փոխ-

մում: Յուրաքանչյուր պատի թերթի խմբադրի պետք է զաս առնի այս որինակից և մի անդամ ընդմիջու չիչի, վոր թղթակցությունն ուղղել չի նշանակում կարեւիլ յե նրան ավելացնել ինչ վոր խմբին:

Լավ չե, նաև, այնպես անել, ինչպես, որինակ, արեւ և «Աւորպանիկ» պատի թերթի խմբադրի ընկ. Աֆոնիչևիքը (Լենինգրադի մարզի Գոլուտակակի անտառակայան): Ընկ. Աֆոնիչևիքը կարծում է, թե յուրաքանչյուր թղթակցություն անպայման պետք է մի բարձրագործ նախարար ունենա:

Յեթե, որինակ, թղթակիցը զրում է, թե իրենց բրիգադն ինչպես և ցանքին նախապարաստվել, ընկ. Աֆոնիչևին անպայման ըստ կրպից ավելացնում է.

«Խորհրդացին Միության բոլոր զործարաններում, անտառներում ու կոտնածեսություններում լայնորեն ծավալվել և ստախանվյան շարժումը»:

Յեթե թղթակցություն է ստացվել լոգիստի մասին, նա անպայման այսպիսի մի նախարար և ավելացնում.

«Մեր յերկիրն իր զործարաններում, սոցիալիստական դաշտերում հարյուրավոր աշխատանքի հերոսներ ունի: Բայց զեռ կան լոգիստ, ինչպիսիք են Մարկովը և Պրոխորովը»:

Գյուղպղթակիցն իր թղթակցության մեջ մերկացնում է մի զող: Թվում է, թե շատ պարզ ու հասկանալի յե: Բայց վո՞չ: Այդ թղթակցությունը պատի թերթում տեղավարելու փոխարեն «Աղարնիկ»-ի խմբադրիը հեռավից է զրույց սկսում իր բնթերգովի հետ:

«Մենք կառուցում ենք սոցիալիզմ, վորտեղ մարզիկ պետք և զիտակից լինեն: Ասկայն, չնայած գրան, մեր անտառակայանում կան անդիտակից մարդիկ, վորոնը թալանում են սոցիալիստական սեփականությունը»:

Յեվ ինչ և ստացվում: Լոգրերին թերթը նախատում է, վոր նրանք աշխատանքի հերոս չեն, իսկ զորությունը բացատրում է անդիտակցությամբ... Դե, ինչի՞ յե նման այս:

Զի հարկավոր յերկար ու բարակ նախարար զրել յուրաքանչյուր թղթակցության: Զեր կոտնածեսական ընթերցողներին այդ բնդհանությունը բառները վոչ մի նոր բան չեն տա, իսկ այդպիսի նախարանները, ինչպես անհուսում եք, կարող են փշացնել թղթակցությունը:

Իսկ ի՞նչ կարելի յե, յերեմն ել նույնիսկ անհրաժեշտ և, ավելացնել թղթակցությունն ուղղելիս:

Գործնական քաղաքական նախարար թղթակցությանը:

Ճիշտ յեղակացություն՝ նկարադրած փաստերից: Գործնական առաջարկություն: Շնորհալի արտահայտություն՝ թղթակցությունն աշխատացնելու համար՝ մի լավ առակ:

Մրանք ոգուտ կտան: Մրանց զեմ թղթակիցն ել չի առարկի:

Թղթակցությունը պետք է ուղղել միայն անհրաժեշտության չափով, պահպանելով հեղինակի վոնի առանձնահատկությունը, ինամենք վերաբերելով մտքերն արտահայտելու նրա ձևերի հետ:

Այդպիսի ուշադիր վերաբերմունքի որինակ ենք տեսնում «Զա

սորութանոտին» պատի թերթում (Լենինգրադի մարզի Դեմյանովի շրջանի 2-րդ Ազգային կոլտնտեսություն)։ Այդ թերթում յուրաքանչ չյուր հեղինակը բնթերցողների հետ խռում և իր լեզվով։

Դրանից թերթը զառնում է չատ յուրահատուկ, կենդանի ու հետաքրքիր։

### «ՄԱՐԴՈՒ ԶԶՎԱՆԵՔ Ե ԳԱԼԻՒ»

Կթվոր նատալիա ՅԵֆիմովին կոմերք կթում և կանոնավոր կաթը ժամանակին հանձնում է Փերմ։ Բայց, յեթե տեսնեք, թե ինչի մեջ և կթում . . . իսկական կոլտնտեսականը ձրի ել չի վերցնի այդ կաթը։ Նրա կոմիլիթն ուզգակի կեղատչը դույլ է։

Անասնաբուծ Նիկոլայիկն ել, կոլտնտեսության նախադաշտական գակովեցն ել, զիտեն այդ։ Բայց նրանք այդ կաթը չեն ուտում, զրա համար ել զրա մասին չեն մտածում։

Գյուղթզթակից Անդրեյիվ»։

Ինչո՞վ և լույս թղթակցությունը։ Նախ և առաջ իր պարզությամբ ու հասկանայիտությամբ։ Լեդիի յուրահատկությամբ, վորը ուղղելու ժամանակ չի փացրվել։

Նույնպիսի արժանիքներ ունի նույն թերթից վերցրած հետեւութղթակցություն։

### «ՄԱՐԴՈՒ ՔԵՑՆ Ե ԳԱԼԻՒ»

Մարդու քեֆն և զալիս, յերք նայում ևս անսահատահ իվանովի ձիուն։ Նա միջակից ավելի զեր է։ Մազերը վայլում են հայելու պես։ Յեվ ինչո՞ւ պիտի վատ լինի այդ ձին, քանի վոր բվանովը սիրում ե նրան։

Գոմում նա ջրաման ունի։ Կերամանը լույն է, խոտը վոտքի տակ չի թափառ։ Վորոշակի ժամերին նա ջրում և իր ձիուն, ամեն որ մաքրում և նրան և չափից ավելի չի բեռնում։

Մյուս կոլտնտեսականները պետք ե իվանովից սովորեն ձի պահել։

Ստուգող հանձնաժողով՝

Ֆ. Խվանով և Ն. Թիոլորով»։

Դժվար չե նկատել, վոր այս թղթակցությունը ևս համեմված է կենդանի արտահայտություններով ու համեմատություններով, ինչպես որինակ՝ «մազերը վայլում են հայելու պես»։ Յեթե խմբակրությունն ոկտեղի ուղղումներ անել, զրանով միայն կփչացներ թղթակցությունը։

Միշտ պետք է հիշել, վոր զանազան հեղինակներին հատուկ հետաքրքրական արտահայտությունները չատ են աշխուժացնում թերթը։

Նաղեժդա կոնսունտինումնա կրուտսկայան պատմում է, թե Լենինն ինչպես եր ուզգում թղթակցությունները.

«Բանվորական թղթակցությունները նորից ու նորից ելին կարգացվում։ Սովորաբար նրանք զրվում ելին այն յուրահատուկ լեզվով, վորով խռում եր այն ժամանակ բանվորների առաջավոր խավը։ Նրանց լեզվի մեջ նոր բառեր ու տերմիններ չատ կային, բայց դրանք հաճախ զործածվում ելին յուրահատուկ յերանդա-

յորումով, հաճախ, սխալ, անձիշտ ձեռվ։ Հարկավոր եր ուղղել այդ բանվորական թղթակցությունները։ Վաղիմիքիր իլլիչը շատ հոգածար եր զեպի այդ զործը։ Նա շատ եր հոգ տանում, վոր պահպանվի թղթակցության վոլին, վոճը, յուրահատկությունը, վոր նրանք չարժեքազրկվեն, չափից ավելի ինուկիդենտական չդառնան, պահպանեն իրենց դեմքը»։

(Ն. Կրօնիկովն. «Անիլինը կուսակցական մամուլի խմբագիր ու կազմակերպիչ»)։

ՄԵԿ բոլորս պետք ե սովորենք այդպիսի զգույշ ու հոգածար վերաբերմունք ունենալ զեպի յուրաքանչյուր թղթակցությունը։



## ԼԱՎ, ՄԱՔՈՒՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՐ

Խնչակս արդեն վերն ասացինք, վոչ մի գեղքում չպետք է լինի՝ մյուս ծայրահեղության մեջ, այսինքն՝ բոլորին չուզզել թերթակցությունը, թողնել այսպես, ինչպես թղթակիցը գրել է:

Ամեն անգամ շի կարելի հույս գնել, թե թղթակցությունը, կարծես, դրված ե հարթ, սահուն: Նախքան թղթակցությունը պատի թերթում տեղավորելը պետք է լավ կշռաղատել նրա յուրաքանչյուր արտահայտությունը:

Կիրապի անվան զյուղատնտեսական արտելի կոլտնտեսականները (Վորոնեժի մարզի Գրեգեննի շրջան) մի անգամ շատ կուշտ ծիծաղեցին իրենց «Եաշա ժիղ» պատի թերթի խմբկութիւնը: Խնչո՞ւ ծիծաղեցին: Վորովհետեւ խմբկութիւնը գլխի չեր ընկել և մի թղթակցության մեջ չեր ուղղել հետեւյալ անհեթեթությունը.

«Ծուրջը խաղաղ եր, բայց վոստում եր բուքը»...

Հեղինակը պարզապես ճռճուցը ե: Խնչակս յերեսում ե, նա այն մարդկանցից ե յեղել, վորոնց մասին ասված ե, թէ՝ «գեղեցիկ խոսքի համար իրենց հորն ու մորն ել չեն խնայի»: Խոկ խմբկութիւնուղել թղթակցությունը, չի մաքրել այսուեզ յեղած անհեթեթությունները և ինքն իրեն ծիծաղելի դրության մեջ ե գրել:

Բայց այս բոլորը չե: Թղթակցության մեջ խոսվում է ձիապան Պոպովի մասին, նա գիշերները թաղուն, կոլտնտեսության ձիերով, իր սեփական բանջարանոցին ե տանում զոմի աղբը: Հեղինակը թղթակցության վերնադիրը գրել է «Անդիտակիցը»: Խմբկուն այդպես ել թողել ե: Բայց, մի ժամանեցէք, զա ի՞նչ անդիտակից է: Ուղղակի դող ե, խարդախ: Այդպես ել պետք եր վերնադիր դրվեր: Այդպես ել պետք ե ուղղվեր:

Թղթակցությունները պետք է ուղղել խնամքով, հարգելով հեղինակին ու ընթերցողներին, վորոնց ձանձրացնում ե թերթը, յեթե բոլոր թղթակցությունները սանրված են մի սանրով:

Ուղղելու ժամանակ, առանց հեղինակի յեղուն աղճատելու, պետք ե թղթակցությունից զուրս նետել բոլոր կոպիտ ու հայնոյական արտահայտությունները: Բացի ընթերցողների կշտամբանքից՝ ուրիշ վոչ մի բանի չի արժանացել, որինակ, կամենակի փայտագործարանի «Պիլա» թերթը, վորը թղթակցության մեջ պահել ե հայնոյական բառները:

Ինքն իրեն ավելի անհարմար դրության մեջ է գրել Վորոշիլովի

անվան «Եովի պուտ» կոլտնտեսության պատի թերթի խմբկուլը (Վորոնեժի մարզի Լաղոմիրովսկի շրջ.): Այդ պատահել է հետեւյալ կերպ:

Գյուղթղթակից ընկ. Շատանկոն մի հետաքրքիր ու չահեկան թրղթակցություն ե զրել հայնոյանքի դեմ պայքարելու մասին: Խմբկութերթում տեղավորել ե այդ թղթակցությունը: Յեվ ամեն ինչ կլիներ, յեթե... խմբկութերթակցության մեջ չափելացներ այդ հայնոյական բառերը:

— Այս ի՞նչ բան է, — հուղվեցին կոլտնտեսական ընթերցողները, — համոզում են չհայնոյել, բայց հենց իրենք ել թերթում կըրկում են ամեն տեսակ հայնոյանքներ...

Բայց հարցը միայն հայնոյանքները չեն: Անձեռնմխելի թողնելով յուրահամառներկ ժողովրդական արտահայտությունները, առակները, առածները, միաժամանակ պետք ե անողոքարար դուրս չարտել թղթակցություններից մեր յեղին խորթ բուլոր բառերը:

Պատի թերթի յեղուն չպետք ե ապառտել նաև տեղական, վոչ գըրագետ բարբառային սխալ ձեռքով ու բառերով, ինչպես որինակ՝ «զարում եմ», «հորի», «ինչըր» և այլն: Կան անտեղյակ խմբագիրներ, վորոնք պատի թերթում այդպիսի բառեր տեղավորելով, կարծում են, թե այդ ե ժողովրդական յեղուն:

Պետք ե հիշել, վոր պատի թերթը պարտավոր ե իր ընթերցողին զրական, կոլտնտեսական յեղուն սովորեցնել:

Պատի թերթի յեղուն պետք ե լինի լավ, մաքուր, բոլոր ընթերցողներին ժամանելի, խմական ժողովրդական յեղուն:

Ամենալուրջ և նույնիսկ ամենաբարդ հարցերի մասին ել կարելի յե և պետք ե գրել պարզ, հասկանալի յեղինով: Այդպիսի հիմանակի գըրավոր ու բանափոր խոսքի որինակներ և տալիս մեզ ընկեր Ստալինն իր յուրաքանչյուր յելույթում: Վերցնենք թեկուղ այս հատվածը՝ նրա հիմանակի վեկուցումից, վոր տվեց Խորհուրդների համաժուկան VIII արտակարգ համալուրմարում:

«...Մեր խորհրդային զյուղացիությունը միանդամայն նոր զյուղացիություն է: Մենք այլևս չունենք կալվածառերեր ու կուրիներ, վաճառականներ ու վաշխառուներ, վորոնք կարողանալին չահաղործել զյուղացիներին: Հետեւբար, մեր զյուղացիությունը չահաղործումից աղատազրված զյուղացիություն է: Այնուհետև, մեր խորհրդային զյուղացիությունն իր ձնող մեծամասնությամբ կոլտնտեսային զյուղացիություն է, այսինքն՝ նա իր աշխատանքը և իր ստացվածքը հիմնում ե վոչ թե անհատական աշխատանքի ու հետամնաց տեխնիկայի վրա, այլ կոլեկտիվ աշխատանքի և արգի տեխնիկայի վրա: Վերջապես, մեր զյուղացիության տնտեսության հիմքում զանգում ե վոչ թե մասնավոր սեփականությունը, այլ կոլեկտիվ սեփականությունը, վորն անձեւ է կոլեկտիվ աշխատանքի բաղայի վրա:»

Ինչպես տեսնում եք, խորհրդային զյուղացիությունն զամբանդամայն նոր զյուղացիություն է, վորի նմանը դեռ չի իմացել մարդկության պատճությունը:

Այսակա վերլուծած և մի շատ լուրջ հարց, արփած և պատմական մի խոչընալույն յերեվոյթի բնորոշումը։ Բայց վորքա՞ն պարզ ու հասկանալի յէ ասված այս ամենը։ Մենք բռլորս այդ պետք և սպորենք ու սովորենք լնկեր Ստալինից։

Թղթակցությունն ուղղելիս խելքին զոռ տալու կարիք չկա։ Վորքան հասկանալի դրված լինի թղթակցությունը՝ այնքան լով։ Մենք, որինակ, շատ լավն ենք համարում հետեւյալ թղթակցությունը։

### «ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆ»

Այս բերքահավաքի ընթացքում կոլտնտեսական Ա. Ի. Զենոն-կովն իսկապես վոր ստախանովաբար աշխատեց։

Նա կարողացավ հնձերու տեխնիկային այնպես տիրապետել, վոր արտադրանքի նորմաները կրկնակի չափով դերակատարում եր։ 19 սրում նա հնձեց 152 հեկտար։ Կոլտնտեսականների ընդհանուր ժողովում, վարտեղ քննվում եր ստախանովականների խորհրդակցությանն ընկեր Ստալինի արտասանած ճառը, Զենոնկովը խոսք տվեց յեկադ տարի որական 8 հեկտարի փոխարեն 10—12 հեկտար հնձել։

Վողջունում ենք ստախանովական կոլտնտեսականին։

(Վորոնեժի շրջանի Սոսեդսկի շրջանի Բուդյանով անվան կոլտնտեսության մեջ անդամ պատրիկայից)։

Յեթե մի ժամանակ ցարական չինովնիկներն ու գրադիրները տարածել ելին այն արտահայտությունը, թե՝ «Խոսում և այնպես, ինչպես գրում ե», ապա մենք, ընդհակառակը, պետք և աշխատենք զրել այնպես, ինչպես խօսում են մաքուր-դրական, ժողովրդական, կենդանի լեզվով։ Իսկ մեր յեզուն շատ հարուստ ե, նա յուրաքանչյուր միտք արտահայտելու համար շատ ու շատ զեղեցիկ, պատկերավոր ձեեր ունի։

Իդուր չե, վոր, ինչպես ընկ. Բոնչ-Բրուեվիչն և մկայում, Լենինը վրգովում եր, յերբ կարդում եր անշնորհք շարադրած մի փաստաթուղթ կամ հոգված։


«Յեթե նա տեսնում եր, վոր շարադրանքի մեջ հանդամատ-չելիություն չկա, միշտ հարց եր տալիս։ «Միթե՝ զուք չեք կա-րող ձեր մտքերը ուսուաց լիզվով այնպես շարադրել, վոր իրոք մատչելի լինեն բոլորին։ Ռուսաց յեզուն շատ հարուստ է։ Յեթե զուք այդ չեք անում, ապա մեզավոր եք ինքներզ և վոչ այն յեզուն, վորով զրում եք»։ Յեկ նա պահանջում եր յուրաքանչյուրից, և վորքան ընկերն ավելի պատասխանատու յեր յինում, այնքան ամելի խխա եր պահանջում, վոր հեղինակը խնամքով կատարի իր աշխատանքը՝ հանելով առավելադույն պարզության։ Նա տանել չեր կարողանում մեզ մոտ յուրացքած լրագրային լեզուն, վոր համախ այնքան աղքատ, դժվար, տխուր ու անհասկանալի յեր յինում, վոր Վլագիմեր Խլիխը շատ անդամ լրագիր կարդալիս բացականչում եր։ «Ի՞նչ լեզվով ե զրված այս։ Միթսներեն

և կարծիս։ Վոլապյուկ<sup>1)</sup> և և վոչ թե Տոլստոյի ու Տուրգենևի<sup>2)</sup> լեզուն»։

(Ա. ԲԱՆՉ-ԲՐՈՒԵՎԻՉ. «Էնցիքս եր աշխատում Վլագիմեր Իլյիչը», Ժունալ «Հիտառել ի Պիտառել» № 2, 1928 թ.)

Ինքը՝ Լենինը հիմանալի խմբագիր եր և սքանչելի յեր զրում։ Ընկեր Ստալինի շեշտակի զիտողությամբ «միայն Լենինն եր կարողանում ամենախճճված հարցերի մասին զրել այնքան պարզ ու հասկանալի, սեղմ ու համարձակ ։ յեր յուրաքանչյուր Գրադր վոչ թե խոսում ե, այլ կրակում» («Լենինի մասին» զրքույից, Կուսհրատ, 1937 թ., եջ 26)։

Աւրեմն ի՞նչ պահանջներ եր առաջադրում լենինը լրագրային լեզուն։ Հետեւապես, յուրաքանչյուր լոմբկոլ ի՞նչ ակներկ կանոններ ողետք ե կիրառի թղթակցությունն ուղղելիս։



1) Վոլապյուկ՝ միջազգային լեզվի անուն։

2) Ջուռ խոչընակույն զրումներ, վորոնք լեզվին վարդեսորեն ողետքու սրբնակներ են թողել։

## ՄԻՔ ՉԱՐԱՇՎԻ ՈՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԳՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

«Մեր կյանքը» պատի թերթաւմ (Վորոնեժի մարզի Զերժինսկու քաջանի Կիրովի անվան կոլտնահասություն) մի անգամ՝ կոլտնահասության արագարական պլանի մասին մի թղթակցություն եր տպված։ Նրա մեջ ի միջի այլոց առված եր.

«Մենք պետք ե յուրաքանչյուր կետին մոռենանք մանրամասուրեն, ոգտակար զործողության կուֆիցինաներով»։

Ի՞նչ կարող է նշանակել այս՝ կոլտնահասականներից վոչ մեկը չհակացավ։ Յեվ, յեթե ճիշտն առենք, հավանորեն դրանից շատ բան չեն հասկացել նաև վոչ ինքը՝ հեղինակը, վոչ ել խմբագրական կուկիան։

Վագիմիր հւյիչ Լենինը շատ անգամ է գեմ զուրս յեկել մամուլում անտեղի կերպով ոտար բառեր զործածելուն։ Դեռևս հեղափոխությունից առաջ նա զրում եր, վոր բոլշևիկները

«...պետք ե կարողանան խռով պարզ ու հասկանալի, մասսային մատչելի լեզվով, վճռականորեն զեն նետելով զժվար հասկանալի տերմինների, ոտար բառերի ծանր հրետանին, վորոնք սերտված, պատրաստ են, բայց դեռևս անհասկանալի յեն մասսային, զեն նետելով նրան անձանոթ լողունդները, բնորոշումները, յեղուակացությունները»։

(Անհն. Յերկեր, հատոր X, էջ 143—144)։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունից հետո Լենինն իր «Բուռաց լեզուն մաքրելու մասին» հոդվածում զրում է.

«Մենք ոռուաց լեզուն փչացնում ենք։ Ոտար բառերը զործենք ածում առանց անհրաժեշտության։ Գործ ենք ածում անձիւն։ Ինչո՞ւ առել «գեֆեկաներ»։ Յերբ յերբ կարելի յե առել թե ըությունները, պակասությունները, կամ արատներ։

Իշարկե, յերբ հենց նոր միայն կարդայ սովորած և մահավանդ թերթ կարդայ սովորած մարզը սկսում է ջանասիրարար թերթեր կարդալ, նու տկամայից յուրացնում և յեզի լրադրային արտահատությունները։ Բայց հենց լրադրային լեզուն ել մեզ մոռ նույնպես սկսում է փշանալ։ Յեթե նոր միայն կարդալ սովորած մարզուն ներելի յե վորպես սկսնակի ոտար բառեր զործածելը, ապա զրականագետներին այդ ներել չի կարելի։ Ժամանակը չե՞ արզյոր, վոր մէնք կոիք հայտարարենք առանց անհրաժեշտության ոտար բառեր զործածելու դեմ»։


Հասկանալի յե, վոր Լենինը նկատի չուներ այնպիսի հանրահայտնի, վաղուց արգեն զործածության մեջ մտած բառերը, ինչպիսիք են՝ «ավտոմոբիլ», «տրակտոր», «ավտացիա» և այլն։ Այստեղ նա նկատի ուներ ընթերցող մասսային իրոք անհասկանալի բառերը։ Աչա հենց այդ բառերն ե, վոր պետք ե փոխարինել մեր լեզվի նույնանիշ բառերով։

Այն գեղքում, յերբ զյուղթղթակեցը, կամ խմբագիրն անհրաժշտ են համարում զործածել վո՞չ բառը ընթերցողներին հասկանալի ոտար բառ, ապա այդ գեղքում ել պետք ե վարվել այնպես, ինչպես համար անում եր վարդիմիր իլլիչը։ Նա տեղն ու տեղը բացատրում եր այդ բառը կամ փակածերում ե կամ հենց այդ ոտար բառի կողքին գնելով ուսւերեն բառ, միացնելով՝ «այսինքն» արտահայտությամբ։

Հենց այլպես ել, միանգամայն ձիչտ ե վարվում «Պոբեդա» պատի թերթի խմբկուր (Վորոնեժի մարզի Սոսեղսկի շրջանի Ստալինի անվան կոլտնահասություն)։ Այդ թերթը մի լորդի եղուստ անլանելով՝ տեղն ու տեղը բացատրում ե.

«Եղուստ ե կոչվում այն մարզը, վոր ապրում ե միայն ինքնի իր անձի համար և հաշիվ չի առնում հասրակական շահելը»։ Յեվ շատ լավ ե արել թերթը։

11-2855092



## ԽՈՒՍԱՓԵՑԵՔ ԿՐՃԱՏ ԲԱՌԵՐԻՑ

Մի չարք պատի թերթերի խմբակիրներ կրծատ բառերի զործածությունն այնպես են չարաշահում, վոր ընթերցողները, բառիս իսկական իմաստով, սախալիք են լինում յենթաղրությամբ հասկանալ թղթակցության բովանդակությունը:

Լենինը ծաղրում եր անհրաժեշտությունից չըդխող ամեն մի կրծատաւմ:

Բառերի՝ մասսաներին անհասկանալի կրծատումներին բացառաբար և վերաբերվում նաև ընկեր Ստալինը: Համամիտութենական կոմունիստական կուսակցության XVII համագումարում ընկ. Լ. Մ. Կալանովիչը դրա մասին ասում էր.

«Ընկեր Ստալինը հաճախ կշտամբում և գրականագետներին ու մեր լրագրերին, վոր նրանք հաշվի չառներով լայն մասսաների մակարդակը, զործ են ածում ամեն տեսակ կրծատիք բառեր: Ահավասիկ որինակ, զրում են միջնազգային պատանեկան որվա մասին, և անպայման կտեսնեք՝ ՄՅՈՒԴ:»

Մենք ընկեր Շուխինին կենտրոնի գյուղատնտեսական բաժնից գյուղ ուղարկեցինք, վորպեսզի նա ուսումնասիրի, թե ինչ զրբքերի պահանջ կա այնուղ, ինչ մակարդակ ունի այնուղ ընթերցողը: Նա պարզեց, վոր այնուղ քիչ զիրք կա: Ընկեր Շուխինը զրուցի ժամանակ հարցնում է: «Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ և ՄՅՈՒԴ-ը: Մի կոմունիստ նրան պատասխանում ե: «ՄՅՈՒԴ-ը — դա մի խոսքով հեղափոխական տոն ե»: Բայց թե ինչ և նշանակում ՄՅՈՒԴ խոսքն ինքը՝ չպիտեմ, ասում ե:

Կամ վերցնենք մեր լրագրերը, այնուղ հաճախ և հանգիստում ձջու խոսքը: Մեզ մոտ զիտեն, վոր կրծատ այսպես են անժամանամարտարարակիտական — տեխնիկական աշխատավորներին: Բայց աշտ դյուզական կոմունիստը կարդում է ձջու և չի իմանում, թե ինչ ասել և ձջու: Լրագրերում այսպիսի կրծատում կա՝ 4 կվ.: Ի՞նչ ասել և 4 կվ.: Գյուղական կոմունիստին, ասենք վոչ միայն նրան, դժվար ե զիմի ընկնել, վոր այս կրծատման տակ թագնիած են 4-րդ կրտսեր բառերը: Յես սա չեմ ասում նրա համար, վոր ծիծաղենք մի մարդու վրա, վորը հասարակ բաներ չպիտե: Վոչ, ամելի շուտ հարկավոր ե ծիծաղել նրանց վրա, ովքեր այսպես են զրում բանվորների ու գյուղացիների համար»:

(Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ. կազմակերպչական հարցեր: Զեկուցում Համ(թ)Կ 17-րդ Համագումարում. Հայ կուսիրան, 1934 թ., Խջ 118):

Կրծատ բառերը, բացի այն, վոր վոչ ամենքին են հասկանալի, հաճախ ուղղակի աղեղ են: Նրանք դուր չեն զալիս ընթերցողներին և հետ են մղում նրանց թերթից: Այդ բառերը կարող են վշացնել լավ բովանդակություն ունեցող թղթակցությունը:

Որինակ՝ «Կրամնի զապոլիկ» կոլտսնեսության պատի թերթում (Լենինգրադի մարզի Ակուլովսկի շրջ.) մի թղթակցություն և տեղափորփել կոմյերիստիության աշխատանքի մասին: Թղթակցությունը վատր չե, բայց նրան մթագնել և «Կոմսորոգանիդացիա» (Հայերեն՝ կոմյեկազմակերպություն: — թարգ.) անները աշնակի կրծատ բառի բաղմաթիվ գործածությունը:

«...Կարձ ժամանակամիջոցում մեր կոմյեկազմակերպությունը ցույց տվեց իր կոմյերիստական գեմքը: Կոմյեկազմակերպության մեջ ընդամենք հինգ մարդ կա, վորոնցից չորսը դյուզ-թղթակցից են: Գյուղթղթակից ընկ. Այերսկելիքը կոմյեկազմակերպության կողմից կցված և պատի թերթին ողներու: Կոմյեկազմակերպությունն իր ամրող աշխատանքն ուղղել է կոլտսնեսությանը ողներուն...»:

Ցեմել խմբկուն այս թղթակցությունն ուղղելիս «կոմյեկազմակերպության» փախարեն մի տեղ զրեր «կոմյերիստական կազմակերպություն», մի ուրիշ տեղ՝ «կոմյերիստականները», յերրորդ տեղը «կոմյերիստիությունը», զրանից թղթակցությունը շատ բան կշահեր:

Իշարկե, վոչ վոք չի առարկում այն կրծատ բառերի գեմք, վորոնք հաստատորեն մտել են մեր ժողովրդի մեջ և նրանց նշանակությունը լիովին հասկանալի յե լուրսին: որինակ՝ «ըրջկոմ»», «դյուզխորհուրդ»», «կոյտանասություն» և այլն: Խոսքը վերաբերում ե այն մտացածին կրծատումներին, վորոնք անհասկանալի յեն մնում և իր ժամանակին այնքան վրագում ելին լենինին:



## ՊԱՅՔԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՎՈՃԻ ԴԵՄ

Հաճախ պատի թերթերի լիդուն փչանում, աղոտավում և հիմնարկային ամփոփագրերից, գեկուցագրերից, հաշվապահական տեղեկանքներից փոխ առած արտահայտություններով: Դրա զիմ պետք է պայքարել: Ամբազրական կուղիան թղթակցությունները պետք է խնամքով մաքրի զրասենյակային արտահայտություններից ու գարձագագարից:

Շատուրի ելեկտրոկայանի «Ելեկտրոուղարնիկ» պատի թերթում այսպիսի մի արտահայտություն կար.

«Կծկող արհեստանոցը պետք է վերակառուցի իր աշխատանքը մոռուների վորակական բացթողման հարցում, սասախանովյան շարժման ծավալման հարցում, զոյտթյուն ունեցող թերությունների վերացման հարցում»:

Ել չենք իսոսում այն մասին, վոր այս նախադասությունն ընդհանրապես մի մեծ բովանդակություն չունի և ելապես վաշինչ չի առում ընթերցողին: Ուշակը ություն դարձնենք միայն այն բանի վրա, վոր այսուհեղ յերեք անդամ զործածված և ինչ վոր մի հիմնարկային հաշվետվությունից փոխ առած «Հարցում» արտահայտությունը: Տեսքը, թե նույն նախադանությունը վորքան ավելի հասկանալի կրառնա, յեթե նրա միջից գուրս գցենք զրասենյակային արտահայտության չոր ու ցամաք ձեւերը.

«Կծկող արհեստանոցը պետք է վերակառուցի իր աշխատանքը, վորպեսզի լավորակ մոռուներ արտազրի, ծավալի ստախանության շարժումը և վերացնի թերությունները»:

Նույն զրասենյակային վոճի ազգեցությունն և, յերբ փոխանակ դրելու՝ այսինչ ընկերը յեկել է Հողժողկոմատից, զրում են՝ այսինչ ընկերը յեկել է Հողժողկոմատի զծով, կամ՝ այսինչ ընկերը յեկել է Հողժողկոմատի կողմից:

Մեծ իմաստություն չի հարկավոր հասկանալու համար, վոր Հողժողկոմատը մարդիկ ուղարկելու համար հատուկ զծեր չունի: Պարզ է նաև այն, վոր Հողժողկոմատի կողմից զալը զեռ չի նշանակում Հողժողկոմատից զալ:


Մի ուրիշ որինակ: Գրում են: «Գարնանացանի առաջին իսկ որեց զյուղկոռողն ապրանքը դաշտ չպրտեց»: Հասկանալի յեւ, վոր ցանքի որերին զյուղկոռողն ապրանքը դաշտ և տարել, մոտեցրել և զնորդին և շատ լավ և արել: Բայց ինչո՞ւ զրապարտել զյուղկոռողին, առելով, թե նու ապրանքը «Հպրտել» և վոչ թե փոխադրել, տարել: Զե՞ վոր «Հպրտած» ապրանքից շատ բան չի մնա:

Կամ վերցնենք բաղմաշարչար «մշակել» բառը: Գրում են՝  
ա) Կոլդարչության նիստում մշակեցին ՄՏ կայանի խորհրդի վորոշումը՝ բերքատվության բարձրացման մասին:  
բ) Կոլանտեսականների ընդհանուր ժողովում մշակած վորոշման հիման վրա պարագայլություն վերցրին:  
գ) Պատի թերթերի հեռակայող խմբագիրներն ու դյուզթղթակեցները լեզվի զասին մշակեցին մի առաջադրություն:  
դ) Բրիգադը մշակեց կենտկոմի փորոշումը:  
ե) Անցյալ տարի կոլանտեսությունը քանի հինգ հեկտար բամբակ մշակեց:

Նկատո՞ւմ եք, թե միենույն «մշակել» բառը քանի առումով և գործածվում: Յեկ գեռ այս բոլորը չեն, այդ բառը մեր պատի թերթերում ուրիշ չառ առումներով են և գործածվում: Մինչդեռ մենք յուրաքանչյուր զետքի համար առանձին բառ ունենք (ուսումնասիրել, սովորել, քննել, ցանել և այլն): Բայց, ահա, կենինը խուսափում եր այդ բառից: Նա զբում եր.

«Որդյոք նախագարասալված» և հարցը, ուսումնասիրված և, մտածված, կշողագաված և արդյոք այդ կողմից»:  
(Լենին. Յերկեր, հատոր XXVI, էջ 74):

Ուշագրություն գարձեք՝ «նախագարասալված», «ուսումնասիրված», «մտածված» և վոչ թե «մշակված»:



## ՃՆՈՐՀՔՈՎ ՎԱՐՎԵԼ ՇՎԵՐԻ ՀԵՏ

Շատ պատի թերթեր ճիշտ չեն վարփում թվերի հետ։  
Կան խմբագիրներ, վորոնք կարծում են, թե թղթակցությունը մեջ  
վորքան շատ թվեր լինեն, այնքան թղթակցությունը համոզիչ կլինի։  
Բայց բարորդին հակառակն է զուրս զարիս. բնթերցողն ու զարիս հը-  
րաժարվում է կարդալ արդպիսի թղթակցությունը։

Իսկ ինչո՞ւ յեւ այդպես։ Խորհուրդների Համառուսական VIII հա-  
մագումարում աված իր զեկուցման մեջ բնկեր լենինը շատ լավ է  
բացարձել այդ ։ Նա ասել է.

«Այդ դրաւոյելում, վոր բաժանված է ձեզ, — Պարենկոմի յե-  
րեք տարվա Հաշվետվության մեջ մի վորքիկ ալյուսակ կա. վո-  
րից յես կարդամ թիայն հանրադումարի թվերը, այն եւ կոր թը-  
մերով, վորովհանի թվեր կարդալը և մահավանդ լսելը զժգար եւ։  
Օ.Ենին. Յերկեր, հանոր XXVI, հ 39)։

Լենինը դանում էր, վոր Հարկավոր և իր ունկնդիրներին կոր  
թվեր առաջ ։ Ինչո՞ւ։

Վորովհետեւ կլոր թվերը շատ ավելի ճիշտ և մտքում որաշել։

Առանձնապես պետք է խոսել տոկոսների մասին։ Համարյա միշտ,  
առանց խմառին վնաս հասցնելու, իսկ բնթերցողին սկսում տարով,  
50 տոկոս ասելու փոխարեն կարելի յեւ ասել «կեար», կամ 250 տոկո-  
սի փոխարեն՝ «յերկու և կես անգամ ավելի»։

«Վայերյոդ» պատի թերթում («Կրամայա Նեվա» կոլտնտեսու-  
թյուն) մեղավորված էր այսպիսի մի արտօնահայտություն։

«Մեր կոլտնտեսությունն ունի խողարուծական ֆերմա 48  
դրուխ խողով, վորոնց 75 տոկոսը մատղաշներ են»։

Միթե ավելի պարզ չե՞ր լինի, յեթե առանց տոկոսի ողնությանը  
դիմելու ասվեր։

«Մեր կոլտնտեսության ֆերմայում կա 48 խող, վորի յե-  
րեք քառորդը մատղաշներ են»։

Կամ ավելի պարզ։

«...վորից 36-ը մատղաշներ են»։

Հասկանալի յեւ, պատի թերթում չողեաք և տեղավորել այնպիսի  
բարդ թվական աղյուսակներ, վորոնցից բնթերցողների մեծ մասը  
գժվարությամբ բան կասկածու։

Յերբ խմբկովը պատի թերթում ամփոփագիր և տեղավորում,  
պետք է տալ միայն մի քանի ամենակարեսը թվերը և այն եւ, ան-  
պայման, անհրաժեշտ բացարձություններով։

Սակայն, չի կարելի նաև թերապնահատել թվերի նշանակությու-

նը։ Մեր մամուլում թվերը մեծ դեր են խաղում։ Պատի թերթը կար-  
գալիս կորտնեսականերն առաջին հերթին ամփոփագիրի վրա յեն  
ուշագրություն դարձնում։


Ապա, մի տեսնենք վո՞ր տեղն ե բոնում մեր ողակը։

Լենինը շատ անզամ է նշել, վոր մեր կուսակցությունը բանվորին  
ու դյուզացուն պետք է համոզի վոչ թե ընդհանուր զատողություննե-  
րով, վոչ թե բարձրագորդ բառերով, այլ փաստերով ու թվերով։

Ինքը՝ լենինը այն կամ այն յերկույթի արմատները բանալու հա-  
մար բացառիկ չնորհքով եր ողակործում թվերը։

Թվի մեջ, յեթե այն չնորհքով ցույց տրվի ու բացարարի, համո-  
զելու վիթխարի ուժ կա։

Այսաեղից ել յեղակացություն. յուրաքանչյուր գյուղթղթակից,  
յուրաքանչյուր պատի թերթի խմբագիր պետք է կարողանա չնորհքով  
վարդել վոչ միայն խոսքերի, այլև թվական ամյալների հետ։



## ՃԻՇՏ ԱՐՏԱՀԱՅՏԵՑԵՔ ԶԵՐ ՄԻՏՔԸ

Մեր լեզուն շատ հարուստ է. յուրաքանչյուր միաք, ամեն մի նրբություն արտահայտելու համար հասուկ բառ կա: Յեվ յեթե դուք չեք ուզում ընթերցողների մեջ գժգոհություն և նույնիսկ վրդովմունք առաջացնել, պետք է այնպես անեք, վոր յուրաքանչյուր բառն արտահայտի հենց այն, ինչ գուք եք ցանկանում առել:

Թղթակցությունն ուղղելիս ինքը քեզ հաճախ հարց պիտի տաս. արդյոք այն բառն է զործածված, վոր այստեղ հարկավոր է: Բնթերցողները ճի՞շտ կհասկանան մեզ:

Դժբախտաբար փո'չ բոլոր խմբաղիրներն են մտածում՝ զրա մասին: Շատ հաճախ զործ են ածում «փո'չ այն բառը», վոր պետք է:

Այսպես, որինակ, վորոշիլովի անփան կորանեսության «Նորի պուտ» պատի թերթը, նկարագրելով կարմիր անկյունում տիրող դրսությունը՝ զրում է.

«Անկյունում մարդիկ հավաքվում են, բայց այստեղ նրանք զբաղվում են այլանդակ զործով. ծխում են և սեմիշկա ըրթում»:

Այստեղ այն չի ասված, ինչ պետք եր ասել: Զե՞ վոր ընդհանրապես վոչ ծխելն է այլանդակ զործ, վոչ արեածաղկի սերմ ուտելը. Միայն կարմիր անկյունում այդ անել չի կարելի: Ուրեմն՝ այդ արտահայտությունը մոտավորապես այսպես կարելի յեր զրել.

«Անկյունում մարդիկ հավաքվում են, բայց զբանից ի՞նչ ոգուտ. կան այնպիսի հաճախորդներ, վորոնք անկյունում ծխում են ու արեածաղկի սերմ ըրթում: Կարմիր անկյունում ալդպես անելն այլանդակ բան է»:

Քիչ չեն պատահում այս կարգի արտահայտություններ.

«Եերածական ճառ տվեց ակումբի վարիչը»:

«Քիչ են ուշադրություն հատկացնում»:

«Կոմյերիտմիությունը զեկավար զեր է տանում»: Յեվ այլն:

Մինչզեռ ամեն մի գրադեատ ընթերցող կարող է խմբովին հիշեցնել, վոր ճառն ասում են կամ արտասանում, ուշադրությունը դարձնում են, զերը կատարում են կամ խալում:

«Վարչության անփութության շնորհիվ, — զրում է պատի թերթերից մեկը, — կորտնտեսությունն առանց խոսի մնաց»: Մինչդեռ այստեղ շնորհի բան չկա: Հարկավոր եր զերել «Վարչության անփության պատճառով կամ հետևանքով»:

Ուրիշ բան է, յեր պատի թերթը զրում է.

«Անառապահ Մարտինի հոգատար խնամքի շնորհիվ հիվանդ կողմն առողջացավ»:

Այստեղ արդեն շնորհքի բան կա և «շնորհիվ» բառը տեղին ե գործածված:

Նախաղասությունն անտեղի բառերով խճողելու, ուրեմն և թրղթակցության միուրը մթաղնելու հետեւյալ զեպքերն ել քիչ չեն.

### Գրամ են

1) Խաղողի բերքահավաքը կատարված է:

2) Բրիգադիրները բացակայութուն են տալիս:

3) Ղեկավարները պարտավորություն վերցրին:

4) Կոմյերիտականները դպրոցի բակի կանաչագարդում անցկացրին:

5) Մոուրի յերեխաներն ապահոված են ամեն մեկը մի մահ յուրաքանչյուրը մի մահնեկալ ձակալով:

6) Առաջարկեցին պատի պերթ լույս ընծայել: 6) Առաջարկեցին պատի պատի թերթ լույս ընծայել:

Միթե պարզ չե, վոր բոլոր որինակներն ել յերկրորդ ձեռը պելի հասկանալի յեն, քան առաջին ձեռը:



## ՅՈՒՐԱՔԱՆ ՀՅՈՒՐ ԲԱՌ ԻՐ ՏԵՂԸ

Պատի թերթերից մեկում այսպիսի մի արտահայտություն կար.  
«Բրիգադիր Նիկոլայեվի հանցանքով այժմ տեղեկանքների հանձնման ուշացում չի լինում, ինչպես առաջ լինում եր»:

Բայ յերևույթին թղթակիցը ցանկացել է ասել, վոր առաջ այդ նույն բրիգադիր Նիկոլայեվի հանցանքով տեղեկանքներն ուշ ելին հանձնվում հաշվապահությանը, իսկ հիմա այդպիսի բան չի լինում։ Խմբությունը հեղինակին չի ողնել՝ ճիշտ արտահայտելու իր միաբը, և ահա, գուրս ե յեկել, վոր թղթակիցը բրիգադիրին մեղաղբում ե տեղեկանքները ժամանակին հանձնելու համար։ Այսպիսով մի վնասակար անհեթեթություն է ստացվել։

Ի՞նչ պետք եր անել այսաեղ. միայն բառերի տեղափոխություն, և ահա թե ինչ կստացվեր.

«Այժմ տեղեկանքների հանձնման ուշացում չի լինում, ինչ- պես առաջ լինում եր բրիգադիր Նիկոլայեվի հանցանքով։»

Ինձարկե, յեթե մի քիչ խորանանք, կտեսնենք, վոր այսպիս ել նախագահությունը հաստակ չե։ «Տեղեկանքների հանձնման ուշացում չի լինում» ասելու փոխարեն կարելի յեր ասել՝ «Տեղեկանքները չեն ուշացվում», «Տեղեկանքներն ուշ չեն հանձնվում» և այլն։ Կակայն, այս ձեռվ, դոնն, բրիգադիրը չի մեղաղբում տեղեկանքները ժամանակին հանձնելու համար։

Այս մի փոքրիկ որինակը ցույց է տալիս, վոր բառերի գառա- փորությունից ել շատ բան և կախված է թղթակցությունն ուղղելիս դրա վրա մի պետք է ուշադրություն դարձնել։

Բառերի սիմալ գառավորությունը յերբեմն կարող է շատ լուրջ սխալների մեջ գցել։

Այդ անթույլատրելի յե։

Յուրաքանչյուր բառ իր տեղը պիտի դնել։



## ԶՆՃԵՑԵՔ ԱՎԵԼՈՐԴ ԲԱՌԵՐԸ

Սխալ է այն կարծիքը, թե յուրաքանչյուր ավելորդ բառ, յու- րաքանչյուր ավելորդ արտահայտություն ընթերցողին ողնում է ա- մելի լավ հասկանալ հեղինակի միտքը։ Դա ճիշտ չե։ Ավելորդ բա- ռերը միայն մթազնում են հեղինակի միտքը և դժվարացնում՝ հաս- կանալը։

Ավելորդ բառեր սպառի թերթերը քիչ չեն գործածում։  
Ոչ մի քանի որինակ։

1. «Պնոսք և նշել, վոր այն բրիգադներում, վորուեղ բրիգադի ամփամբների մեջ աշխատանքի ճիշտ բաշխում չի կատարված . . .»։

2. «Յեթի վարսեն անցավ իր խկական գործնական աշխատան- քին . . .»։

3. «Հինգ հոգի կորոնանեսական դնացին գաշտ . . .»։

Այս նույն որինակները կարգացեք առանց ընդդժած բառերի և կունանեք, վոր միտքը վոչ միայն չի աղավաղվում, այլև պարզա- նում, դյուրմբոնելի յե դառնում։ Ընդդժած բառերն ընթերցողին վոչ մի նոր բան չեն ասում. բացարձում են այն, ինչ ինքնբարինք- յան հասկանակի յե։ Այսպիսով, մեր բերած որինակների մեջ ընդ- դժված բառերն ավելորդ են և թղթակցությունն ուղղելիս պետք է դուրս ցցվեն։

Համատացած ենք, վոր ընթերցողներից շատերն ստիպված են լինելու մի քանի անգամ կարդալ հետեւյալ նախադասությունը, վոր- ուկողի հասկանան այն։

«Վերոհիշյալ խանութավարները խանութավարներին աշխատանքի ասպարեզում լավագույն ցուցանիների յեն հասել չնորհիվ գե- պիկ սպառողը ցույց տված ամենորյա հոգատարության, ամե- նորյա պահանջի ապրանքների անընդմեջ հայթայթման ու ա- պահովման, առավելացույն ձկունություն ցուցաբերելով ապ- րանքները պահեստից խանութները տեղափոխելու գործում, խա- նութների աշխատանքի ժամերը սպառողի պահանջներին հար- մարեցնելով»։

Յեթե նույն պատի թերթի խմբագրին առաջարկենք մի չնչում կարդալ այս նախադասությունը, նա կես ճանապարհին կանգ կառ- նի ու կասի։

— Ներեցեք, շունչս կտրվում է, չեմ կարող։

Այդ ի՞նչ է նշանակում։ Նշանակում է՝ այս նախադասությունը չատ և յերիար, վոր ընթերցողին հարկավոր և «չունչ քաշել»։ Իսկ

Դրա համար վերջակետ և հարկավոր: Ուրեմն՝ այսպիսի դեպքերում  
պետք է դիմել վերջակետի ողնության. նախադասությունը պետք և  
վերակառուցել, մասերի բաժանել:

Տվյալ դեպքում այս նախադասությունը կարելի չեր այսպես ուղ-  
ղել.

«Այս խանութիւրը լավ են աշխատում, վորովհետեւ վարիշ-  
նելը հոգատար են գետի սպասողը: Երանք ասանց ընդհատումների  
ապրանք են բերում պահեստներից: Խանութիւնների աշխատանքի  
ժամերը հարմարեցրած են զնորդների պահանջներին»:

Այս թղթակցությունը պարզեցնելու մի ձեն ե. նույնը կարելի  
յեր անել և ուրիշ ձևով:

Թղթակցության բովանդակությունն ավելի հասկանալի դարձնե-  
լու համար պետք է հաճախ սկսել նոր պարբերություն: Վատ չի լի-  
նի յուրաքանչյուր նոր միտք սկսել նոր տաղից, այսինքն՝ նոր պար-  
բերություն դարձնել: Այդ ձևով թղթակցությունն ավելի աշխատ-  
կինի, կարգալը՝ ափելի հեշտ:

Տեսեք, թե ընկեր Ստալինն ինչքան վարպետություն և ողտո-  
գործում համառոտ նախադասություններ կազմելու, հարցը սուր և  
պարզ գնելու, կարճ պարբերություններով արտահայտելու այդ ձեռ:

«Կալվածատերերի զասակարգը, ինչպես հայտնի յե, արդեն  
վերացված եր քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտ-  
ման հետևանքով: Ինչ վերաբերում է մյուս շահագործող զասա-  
կարգերին, ապա նրանց ել բաժին ընկալ կարգածատերերի դա-  
սակարգի բախտը: Զկա այլևս կապիտալիստների զասակարգն ար-  
դյունաբերության բնագավառում: Զկա այլևս կուլակների զասա-  
կարգը զյուղատնտեսության բնագավառում: Զկան այլևս վաճա-  
ռականներն ու սպեկուլատններն ապրանքաշրջանառության բնա-  
գավառում: Այսպիսով բոլոր շահագործող զասակարգերը վերաց-  
վեցին»:

Մնաց բանվոր դասակարգը:

Մնաց դյուղացիների դասակարգը:

Մնաց ինտելիցիան»:

(Սորհուրդների համարիութենական 8-րդ արտակարգ համագումա-  
ռում ընկ. Ստալինի տված գեկուցումից):

Այս համառոտ նախադասությունների մեջ ամենախոր մտքեր են  
դրված: Սրանք լիսովին հաստատում են այն հայտնի կանոնը, թե  
այնպես պիտի զրել, վոր բառերի տեղը նեղվածք լինի, իսկ մտքերի-  
նը՝ լայնարձակ:

## ՄԵՀՔԵՐՈՒՄՆԵՐԸ ՃԵՏՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԵԼ

Հազիվ թե լինի մի թերթ, վորը մեջբերումներ չանի, այսինքն՝  
հողվածների, թղթակցությունների մեջ քաղվածքներ չըերի մեր ա-  
ռաջնորդների հողվածներից ու ձաւերից, թերթերից ու զանազան  
գրական յերկերից: Տեղին գործածած մեջբերումն աշխուժացնում ե  
շարադրությունը, նրան տալիս ե պատկերավորություն, ձգրսու-  
թյուն, քաղաքական հստակություն:

Վատն այն է միայն, վոր յերբեմն այդ արվում է անփութորեն,  
քաղվածքի տեքստը, յերբեմն նույնիսկ իմաստն աղավաղելով: Կարիք  
կա՞ ասելու, վոր այդ անթույլարելի, վիճասակար բան է:

Մեջբերումը պետք է կատարել ձատորեն, յերբեք հույս չգնել հի-  
շողության վրա, այլ քաղվածքն անպայման ստուզել սկզբնական աղ-  
բյուրով:

Թերթը լույս ընծայելուց առաջ մի անգամ ես պետք և ստուգել  
լինենից և Ստալինից վերցրած մեջբերումները, համեմատել նրանց  
տպագիր յերկերի հետ, վորպեսզի բաց թողնված ընինի վոչ մի կետ,  
վոչ մի ստորակետ, վոչ մի բառ:

Այս կանոնը չափանակները շատ տխուր հետևանք կարող և ունե-  
նալ: Պետք է զգոն լինել: Հակառակ գեկքում աղավաղված մեջբե-  
րումով կարող ես ծառայած լինել գասակարգային թշնամուն, վնա-  
սարարին, հակահեղափոխականին:

Թղթակցության մեջ վորեն տեղից մեջբերում անելիս հարկավոր  
և փակաղծերի մեջ նշել ազրյուրը—այսինչ հեղինակի այսինչ յերկ,  
այսինչ եջ: Անշուշտ, դուք արդեն նկատել եք, վոր այս դրվում մենք  
ել այդպես ենք անում:

Մի գիտողություն ես. չե կարելի մեջբերվող նախադասությունից  
կտորներ վերցնել կամայական կերպով: Մեջբերումն այնպես պիտի  
կտառարել, վոր հեղինակի միտքը բոլորովին չափավաղվի:

## ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ վ. ի. Լենինն անհրաժեշտ եր համարում դրել պարզ ու հասկանալիք։ Նա ո՞ւմ շահերը նկատի ուներ։
2. Վորո՞նք են թղթակցությունն ուղղելու հիմնական կանոնները։
3. Ի՞նչ պահանջների պիտի բավարարի լրագրային լեզուն։
4. Թղթակցությունն ուղղելիս ի՞նչպես պիտի վարվել ուսար բառերի հետ։
5. Վո՞ր կրնատ բառերն են թույլատրելի և վորո՞նք՝ վոչ։
6. Ի՞նչ է զրասենյակային վոճար։
7. Պատի թերթում ինչպե՞ս պիտի վարվել թվերի հետ։
8. Ի՞նչ նշանակություն ունի բառերի ճիշտ դասավորությունը։
9. Վո՞ր բառերն ենք համարում «ամենորդ բառեր»։
10. Ի՞նչ կանոններ պետք են պահպանել դասազան փաստաթղթերից հեղինակների մեջբերումներ անելիս։

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ուշադիր կարդացեք ձեր պատի թերթի վերջին համարը և ուղղեցք այն ամենը, ինչ ձեր կարծիքով բաց թողած է յեղել սկզբնական ուղղման ժամանակ։
2. Ուղղեցեք մի գյուղթղթակցի թղթակցություն և ձեր ուղղումը ցույց տվեք հեղինակին։ Հարցըրեք, զո՞ւ և նա ուղղումներից, ինչի՞ն և առարկում և ինչո՞ւ։
3. Կոլտնտեսության հաշվապահից վորեե ամփոփագեր վերցրեք և նրա նյութերի հիման վրա մի աշխույժ թղթակցություն գրեցեք։
4. Զեր պատի թերթում գրեք մի յերկար նախադասություն և առանց իմաստին վնաս հասցնելու բաժանեցեք յերկու կամ յերեք համապատության։
5. Պատի թերթի վերջին համարի համար զրած ձեր թղթակցությունից դուրս գցեցեք բոլոր ավելորդ բառերը։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
|   | Եջ |
| 1. Թղթակցություններն ուղղելը պատախանառու գործ է | 3  |
| 2. Միշտ հիշել ընթերցողին                        | 6  |
| 3. Ուղղել խնամքով, առանց աղբավաղումների         | 8  |
| 4. Լավ, մաքուր, ժողովրդական լեզվի համար         | 12 |
| 5. Միի չարաշահի ուսար բառերի գործածությունը     | 16 |
| 6. Խուսափեցեք կրնատ բառերից                     | 18 |
| 7. Պայքար զրասենյակային վոճի դեմ                | 20 |
| 8. Շնորհով վարվել քվերի հետ                     | 22 |
| 9. Ճիշտ արտահայտեցեք ձեր միտքը                  | 24 |
| 10. Յուրաքանչյուր բառ իր տեղը                   | 26 |
| 11. Զնշեցեք ավելորդ բառերը                      | 27 |
| 12. Մեջբերումները հշուությամբ պիտի կառարել      | 29 |

Դւավաճառ № 320 Պատուեր № 25, Տիքառ 1500

Հանձնված և արտադրության 31 մայիսի 1937 թ.

Սառըազրված և ապադրելու 1 հունիսի 1937 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0977607

14 ИЮН 1937

ՏՐՎՈՒՄ Ե ԶԻՒ

346

11  
28550

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒՅ ԵՆ ՏԵՍՆՈՒՄ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

|              |              |
|--------------|--------------|
| Առաւելեն     | Ոսերեն       |
| Բւկրախներեն  | Չեչներեն     |
| Բւլոռուսերեն | Բաշկիրերեն   |
| Վրացերեն     | Չուվաշերեն   |
| Հայերեն      | Մարիերեն     |
| Աւգրեկերեն   | Մոլդավերեն   |
| Գերմաներեն   | Ուգարտերեն   |
| Ղաղախերեն    | Թուրքմեներեն |
| Թաթարերեն    | Տաճիկերեն    |
| Թուրքերեն    |              |

С. Шефтель

## Как править заметки

Издательство ЦК КП(б) А “Хорурдаин Айастан”,  
Ереван 1937